



Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ

Քննական առարկա 6

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Քննաթերթ

	Թեմա	Միավոր
Հարցեր 1	Բազմակի Ընտրություն- ՀՀՄՍ 33, ՖՀՄՍ 9, ՖՀՄՍ 15, ՖՀՄՍ 16, ՀՀՄՍ 37, ՀՀՄՍ 20, ՀՀՄՍ 38, ՀՀՄՍ 41, ՀՀՄՍ 12	20
Խնդիր 2	Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն - ՖՀՄՍ 10	20
Խնդիր 3	Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն - ՀՀՄՍ 1	20
Խնդիր 4	Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն - ՀՀՄՍ 7	20
Խնդիր 5	Ֆինանսական հաշվետվությունների վերլուծություն, գործակիցների հաշվարկ	20
Ընդամենը		100

Հունվար 2026

Հարցեր 1-11. Հարցեր՝ ստանդարտների կիրառման վերաբերյալ

Ընդամենը 20 միավոր

1. 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ Ընկերությունը թողարկել էր 16 միլիոն հատ 1 դրամ արժողությամբ բաժնետոմսեր: 2025 թվականի ապրիլի 1-ին Ընկերությունը թողարկեց լրացուցիչ 8 միլիոն հատ 1 դրամ արժողությամբ բաժնետոմսեր՝ լրիվ շուկայական արժեքով: Իսկ 2025 թվականի հուլիսի 1-ին իրականացրել է 2-ը 3-ի դիմաց իրավունքների (ռայթերի) թողարկում (right issue)՝ մեկ բաժնետոմսի համար 1.60 դրամ գնով: Ընկերության մեկ բաժնետոմսի շուկայական արժեքը 2025 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 2.50 դրամ:

Ընկերության շահույթը 2025թ համար կազմել է 12,845 հազար դրամ:

Որքան կկազմի Ընկերության մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը 2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ «Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ» ՀՀՄՍ 33-ի համաձայն: **(2 միավոր)**

1. 0,41 դրամ
2. 0,46 դրամ
3. 0,15 դրամ
4. 0,43 դրամ

2. Ընկերությունն առ 31 դեկտեմբերի 2025թ իրեն սեփականության իրավունքով պատկանող շենքերից մեկը՝ 12,5 մլն դրամ հաշվեկշռային արժեքով վաճառեց մեկ այլ ընկերության՝ 25 մլն դրամով և այնուհետև անմիջապես կնքեց վարձակության պայմանագիր տվյալ ընկերության հետ՝ նույն շենքի վարձակալության համար՝ 20 տարի ժամկետով:

Առ 31 դեկտեմբերի 2025թ շենքի մնացորդային օգտակար ծառայության ժամկետը կազմում է 25 տարի: Համաձայն պայմանագրի Ընկերության վարձակալական վճարը կազմում է տարեկան 1 մլն դրամ, որը վճարման ենթակա է յուրաքանչյուր տարվա ավարտին: Առ 31 դեկտեմբերի 2025թ վարձակալական վճարների ներկա արժեքը կազմում է 18 մլն դրամ: Գործարքը դիտարկվում է որպես վաճառք՝ համաձայն «Հասույթ գնորդների հետ պայմանագրերից» ՖՀՄՍ 15-ի պահանջի:

Առ 31 դեկտեմբերի 2026թ որքան կկազմի ֆինանսական հաշվետվություններում ճանաչման ենթակա օգուտը վաճառքի և հետադարձ վարձակալության պայմանագրի գծով: **(2 միավոր)**

1. 9,000 հազար դրամ
2. 3,500 հազար դրամ
3. 12,500 հազար դրամ
4. 7,000 հազար դրամ

3. Ընկերությունը վեց տարվա վաճառքի պայմանագրի շրջանակներում վաճառել է լվացքի մեքենաներ մեկ տարվա ստանդարտ երաշխիքով: 2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարում այն վաճառել է 150,000 մեքենա, իսկ 2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարում՝ 185,000 մեքենա: Տարեկան վաճառված մեքենաների միջին 5%-ը պետք է վերանորոգվի երաշխիքի ներքո: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին վերանորոգման պատասխանատուն գնահատում է գալիք տարվա մեկ վերանորոգման միջին արժեքը: 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ապագա վերանորոգման արժեքը կազմել է 75 դրամ, իսկ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 80 դրամ:

Ո՞ր պնդում է ճիշտ արտացոլում Ընկերության 2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններում հաշվապահական հաշվառման ճիշտ մոտեցումը՝ համաձայն «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ՀՀՄՍ 37-ի: **(2 միավոր)**

1. Ընկերությունը պետք է իր շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում պահուստ ճանաչի 740,000 դրամի չափով:
 2. Ընկերությունն ունի իրավական պարտավորություն և պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ նախատեսի 562,500 դրամի չափով պահուստ:
 3. Ընկերությունն ունի կառուցողական պարտավորություն և պետք է իր շահույթի կամ վնասի մասին հաշվետվության մեջ ճանաչի 140,000 դրամի երաշխիքների պահուստի հետ կապված ծախս:
 4. Ընկերությունը պետք է իր շահույթի կամ վնասի մասին հաշվետվության մեջ ճանաչի 177,500 դրամի երաշխիքների պահուստի հետ կապված ծախս:
4. 2025 թվականի հուլիսի 1-ին Ընկերությունը տեղական ինքնակառավարման մարմիններից ստացել է 50,000 հազար դրամի պետական դրամաշնորհ՝ Ընկերության գործունեության ընդլայնմանն աջակցելու նպատակով: Դրամաշնորհը օգտագործվել է 2025 թվականի օգոստոսի 1-ին՝ 150,000 հազար դրամ արժողությամբ տրակտոր ձեռք բերելու համար: Տրակտորի գնահատված օգտակար ծառայության ժամկետը կազմում է 20 տարի:

Ո՞ր պնդումն է ճիշտ արտացոլում «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ՀՀՄՍ 20-ի համաձայն թույլատրված հաշվապահական մոտեցումը: **(2 միավոր)**

1. 50,000 հազար դրամ պետական դրամաշնորհի եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում 2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված հաշվետու տարվա ընթացքում:
2. Պետական դրամաշնորհը ներկայացվում է որպես պարտավորություն՝ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 46,875 հազար դրամ հաշվեկշռային արժեքով:

3. Պետական դրամաշնորհը ներկայացվում է որպես պարտավորություն՝ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 48,958 հազար դրամ հաշվեկշռային արժեքով:
4. Տրակտորը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացվում է որպես հիմնական միջոց՝ 146,800 հազար դրամ հաշվեկշռային արժեքով:
5. 2025 թվականի դեկտեմբերի 31-ին Ընկերությունը թողարկել է 50 մլն դրամ անվանական արժեքով 8% տարեկան տոկոսադրույքով փոխարկելի պարտատոմսեր: Տոկոսները վճարվում են տարեկան՝ դեկտեմբերի 31-ին: Փոխարկման հնարավորություն չունեցող և դրանց համարժեք պարտատոմսերի շուկայական տոկոսադրույքը 10% է: Փոխարկելի պարտատոմսերը կարող են մարվել կամ փոխարկվել 5 տարի հետո՝ պարտատոմսի սեփականատիրոջ որոշմամբ:

Կիրառելի գեղջման դրույքները ներկայացված են ստորև՝

Տարի	8%	10%
1	0,93	0,91
2	0,86	0,83
3	0,79	0,75
4	0,74	0,68
5	0,68	0,62

Որքան կկազմի 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխարկելի պարտատոմսերի սեփական կապիտալի բաղադրիչը: **(2 միավոր)**

1. 3,840 հազար դրամ
2. 46,160 հազար դրամ
3. 4,000 հազար դրամ
4. 46,000 հազար դրամ
6. 2024 հունվարի 1-ին Ընկերությունը կնքեց վարձակալության պայմանագիր մեքենա-սարքավորումը 5 տարի ժամկետով վարձակալելու նպատակով: Տարեկան վարձավճարը կազմում է 320,000 հազար դրամ: Ակտիվի օգտակար ծառայության ժամկետը՝ 10 տարի, իսկ վարձակալության ավարտին սեփականության իրավունքը անցնում է Ընկերությանը: Վարձակալության սկզբում վարձակալության վճարների ներկա արժեքը՝ 950,000 հազար դրամ: Զեղջման տոկոսադրույքը՝ 11%:

2024 թվականի դեկտեմբերի 31-ին Ընկերությունը հաշվառել է վարձակալության վճարները որպես գործառնական ծախս՝ 320,000 հազար դրամ, այլ ոչ թե որպես վարձակալության գծով պարտավորության տոկոսային ծախս: Այս սխալը հայտնաբերվել է 2025 թվականին՝ 2024-ի ֆինանսական հաշվետվությունները ներկայացնելուց հետո:

2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվության մեջ ինչ գումարի չափով է անհրաժեշտ ճշգրտել շահույթը: **(1,5 միավոր)**

1. 120,500 հազար դրամ
2. 199,500 հազար դրամ
3. 320,000 հազար դրամ
4. 25,500 հազար դրամ

7. Դրամաստեղծ միավորի տարրերն առ 31 դեկտեմբերի 2025թ. ունեն հետևյալ հաշվեկշռային արժեքները՝ մինչ արժեզրկման ճանաչումը՝

	Հաշվեկշռային արժեք՝ ՀՀ դրամով
Գուդվիլ	825,000
Գործարան	1,425,000
Շենք	1,950,000
Ոչ նյութական ակտիվներ	600,000
Զուտ ընթացիկ ակտիվներ	645,000

Դրամաստեղծ միավորն արժեզրկվել է 2,500 հազար ՀՀ դրամով: Առ 31 դեկտեմբերի 2025թ. գործարանի իրական արժեքը՝ օտարման ծախսերի նվազեցումից հետո կազմում է 1,5 մլն ՀՀ դրամ:

Որքան կկազմի շենքի մնացորդային արժեքը արժեզրկման կորստի ճանաչումից հետո: **(3 միավոր)**

1. 669,118
2. 1,243,019
3. 1,054,683
4. 1,500,000

Ներկայացված տեղեկատվությունը վերաբերում է 8-9 հարցերին:

Ընկերությունը 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ իրականացնում է հետևյալ նախագծերը՝

Նախագիծ 1 – Նախագիծը սկսվել է 2024 թվականի ապրիլի 1-ին և մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում կատարել է 4,500 հազար դրամ ընդհանուր ծախս՝ հավասարաչափ բաշխված: 2024 թվականի հունիսի 30-ին ղեկավարությունը վստահ էր, որ Նախագիծը համապատասխանում է «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՄՍ 38-ի կապիտալացման չափանիշներին: Նախագիծն ավարտվել է, և Ընկերությունը սկսել է եկամուտ ստանալ 2025 թվականի հունվարի 1-ից: Գնահատվում է, որ Նախագիծը կապահովի եկամուտ հինգ տարի շարունակ:

Նախագիծ 2 – Նախագիծը սկսվել է 2024 թվականի սեպտեմբերի 1-ին: Մինչև 2025 թվականի հունվարի 31-ը, երբ Նախագիծը դադարեցվել է, կատարվել են ամսական

20,000 հազար դրամ ծախսեր: Նախագծի համար գնված մասնագիտացված սարքավորումները փոխանցվել են Ընկերության մեկ այլ հետազոտական նախագծերում օգտագործելու համար:

Նախագիծ 3 – Նախագիծը սկսվել է 2025 թվականի հունվարի 1-ին: Մինչև 2025 թվականի օգոստոսի 31-ը կատարվել են ամսական 40,000 հազար դրամի ծախսեր: Այնուհետև Ընկերության Ղեկավարությունը ավելացրել է ամսական կատարվող ծախսերի գումարը՝ մինչև 60,000 հազար դրամ՝ նախագիծը արագ ավարտին հասցնելու նպատակով, քանի որ 2025 թվականի հուլիսի 20-ին նախագծի համար պոտենցիալ գնորդ է հայտնվել: Մինչև այս պահը Ընկերության Ղեկավարությունը վստահ չէր, որ նախագիծը հաջողությամբ կարող է իրականացվել:

8. 2025 թվականի մարտի 31-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի հաշվետվությունում Նախագիծ 1-ի հետ կապված որքան է կազմում որպես ծախս ճանաչման ենթակա գումարը՝ համաձայն «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՄՍ 38-ի:

(1 միավոր)

1. 1,500 հազար դրամ
2. 3,000 հազար դրամ
3. 1,650 հազար դրամ
4. 4,650 հազար դրամ

9. Համաձայն «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՄՍ 38-ի՝ հետևյալ պնդումներից որն է/են ճիշտ կամ սխալ Նախագիծ 2 և 3-ի վերաբերյալ:

(1,5 միավոր)

		Ճիշտ/սխալ
Ա	Նախագիծ 2-ի վրա կատարված ծախսերը պետք է ծախսագրվեն 2025 թվականի մարտի 31-ին ավարտված տարվա Ընկերության շահույթ կամ վնասի վերաբերյալ հաշվետվությունում:	
Բ	Նախագիծ 2-ի համար գնված մասնագիտացված սարքավորումների գծով մաշվածության ծախս չպետք է ճանաչվի, քանի որ դրանք օգտագործվել են այլ հետազոտական նախագծերում:	
Գ	Նախագիծ 3-ի վրա կատարված ծախսերը պետք է ճանաչվեն որպես ակտիվ 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:	

10. Ընկերությունն ուներ խոշոր եղջերավոր անասուններ, որոնց արժեքը ֆինանսական հաշվետվություններում ներկայացված էր 21,000 հազար դրամով՝ 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ:

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ խոշոր եղջերավոր անասունների իրական արժեքը կազմում է 25,000 հազար դրամ: Եթե Ընկերությունը վաճառի խոշոր եղջերավոր անասունները, վճարելու է 2% միջնորդավճար:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ որքան կկազմի խոշոր եղջերավոր անասունների հաշվեկշռային արժեքը և դրանց իրական արժեքով վերաչափումից առաջացած օգուտը՝ «Գյուղատնտեսություն» ՀՀՄՍ 41-ի պահանջներին համապատասխան: **(1 միավոր)**

1. Հաշվեկշռային արժեք՝ 25,000 հազար դրամ, իրական արժեքով վերաչափումից առաջացած օգուտ՝ 4,000 հազար դրամ,
2. Հաշվեկշռային արժեք՝ 24,500 հազար դրամ, իրական արժեքով վերաչափումից առաջացած օգուտ՝ 3,500 հազար դրամ,
3. Հաշվեկշռային արժեք՝ 21,000 հազար դրամ, իրական արժեքով վերաչափումից օգուտ չի ճանաչվում,
4. Հաշվեկշռային արժեք՝ 24,500 հազար դրամ, իրական արժեքով վերաչափումից առաջացած օգուտ՝ 500 հազար դրամ:

11. Ընկերության հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները կապված են ստորև նշված հոդվածների հետ՝

	31/12/2025			31/12/2024		
	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Ժամանակավոր տարբերություն	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Ժամանակավոր տարբերություն
Հազար դրամ						
Հիմնական միջոցներ	4,300,000	3,235,000	(1,065,000)	4,106,000	2,942,700	(1,163,300)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	155,000	-	(155,000)	109,000	-	(109,000)
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	1,440,000	1,450,000	10,000	1,630,000	1,640,000	10,000
Վարձակալության գծով պարտավորություն	(166,900)	-	166,900	(121,000)	-	121,000
Ընթացիկ պահուսպներ	(44,000)	-	44,000	(38,000)	-	38,000
	5,684,100	4,685,000	(999,100)	5,686,000	4,582,700	(1,103,300)

Հաշվարկեք Ընկերության հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները առ 31 դեկտեմբերի 2024թ և 31 դեկտեմբերի 2025թ. շահութահարկի գործող դրույքաչափի կիրառմամբ՝

(2 միավոր)

Հազար դրամ	Հետաձգված հարկային ակտիվներ		Հետաձգված հարկային պարտավորություններ	
	31.12.25	31.12.24	31.12.25	31.12.24
Հիմնական միջոցներ				
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ				
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր				
Վարձակալության գծով պարտավորություն				
Ընթացիկ պահուստներ				
Ընդամենը հարկային ակտիվ (պարտավորություն)				

Խնդիր 2 - Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

«Դոբմին» ընկերությունը 2025 թվականի մարտի 30-ին ձեռք է բերել մատակարար «Կրոֆին» ընկերության 80% բաժնեմասը՝ 180,000 հազար դրամ կանխիկով, ինչպես նաև «Կրոֆին» ընկերության յուրաքանչյուր 2 բաժնետոմսի դիմաց թողարկել է մեկ բաժնետոմս:

«Կրոֆին» ընկերության վերագնահատման պահուստը ձեռքբերման պահի դրությամբ կազմել է 15,000 հազար դրամ:

«Հենսին» ընկերությունը ուներ 16,000 հազար դրամ չբաշխված շահույթ, երբ «Դոբմին» ընկերությունը 2025 թվականի հունվարի 1-ին ձեռք բերեց իր 55% բաժնեմասը՝ վճարելով 100,000 հազար դրամ, իսկ 87,200 հազար դրամի լրացուցիչ վճարումը հետաձգեց մինչև 2026 թվականի հունվարի 1-ը: Հետաձգված գումարի վճարման վերաբերյալ հաշվապահական հաշվառում չի կատարվել: «Դոբմին» ընկերության կապիտալի արժեքը կազմում է 9%:

Ստորև ներկայացված են երեք ընկերությունների ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունները 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

Հազ. դրամ	Դոբմին	Կրոֆին	Հենսին
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	185,000	75,000	65,000
Ներդրումային գույք	58,000	-	-
Ներդրումներ «Կրոֆին»-ում	180,000	-	-
Ներդրումներ «Հենսին»-ում	100,000	-	-
	523,000	75,000	65,000
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	126,000	50,000	15,000
Դեբիտորական պարտքեր	150,000	20,000	20,000
Դրամական միջոցներ	250,000	100,000	45,000
	526,000	170,000	80,000
Ընդամենը ակտիվներ	1,049,000	245,000	145,000
Կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ (1 դրամ յուրաքանչյուրը)	500,000	100,000	100,000
Վերագնահատման պահուստ	-	30,000	-
Կուտակված շահույթ	238,000	80,000	32,000
	738,000	210,000	132,000
Ընդամենը կապիտալ			
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր	311,000	35,000	13,000
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ	1,049,000	245,000	145,000

Ընկերությունների գործունեության մասին հայտնի է հետևյալը՝

1. «Դոբմին» Ընկերությունը գրանցել է իր ներդրումը «Կրոֆին»-ում կանխիկ հատուցման չափով և որևէ հաշվապահական ձևակերպում չի կատարել բաժնետոմսերի թողարկման վերաբերյալ: Ձեռքբերման օրվա դրությամբ «Դոբմին»-ի մեկ բաժնետոմսի շուկայական արժեքը կազմել է 2 դրամ, իսկ «Կրոֆին»-ինը՝ 5.9 դրամ: Երկու ընկերությունների բաժնետոմսերն էլ ունեն 1 դրամ անվանական արժեք:
2. Ձեռքբերման օրվա դրությամբ «Հենսին»-ի զուտ ակտիվների իրական արժեքը հավասար էր դրանց հաշվեկշռային արժեքին:
3. Ձեռքբերման օրվա դրությամբ «Կրոֆին»-ի զուտ ակտիվների իրական արժեքը հավասար էր դրանց հաշվեկշռային արժեքին, բացառությամբ գործարանի, որի իրական արժեքը 16,000 հազար դրամով ավելի էր, քան դրա հաշվեկշռային արժեքը: Այս ամսաթվին գործարանն ուներ չորս տարվա մնացորդային օգտակար ծառայության ժամկետ:
4. 2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարում «Կրոֆին»-ը ստացել է 66,667 հազար դրամի շահույթ, որը հավասարաչափ կուտակվել է տարվա ընթացքում: Սա զգալիորեն ցածր էր նախորդ տարիների համեմատ: «Դոբմին»-ի ղեկավարությունը տեղյակ էր, որ «Կրոֆին»-ն անարդյունավետ էր կառավարում ծախսերը, և ձեռքբերման օրվանից առաջ նրանք արդեն որոշել էին փոխել Ընկերության բիզնես ռազմավարությունը՝ կրճատումներ կատարելով Ընկերության կառավարման օղակներում, ինչը հանգեցնելու է մոտ 17 մլն դրամ ազատման ծախսերի: Վերակառուցման ծրագրի մասին «Կրոֆին»-ի աշխատակիցներին հայտարարվել է 2025 թվականի մայիսի 20-ին: Գործընթացը սկսվելու է 2026 թվականի հունվարին և կավարտվի մինչև 2026թ մարտ ընկած ժամանակահատվածը: Նախատեսված վերակառուցման ծախսերը չեն արտացոլվել ընկերության ֆինանսական հաշվետվություններում:
5. «Դոբմին» ընկերությունը ձեռք է բերել իր ներդրումային գույքը 2025 թվականի հունվարի 1-ին: Գույքի արժեքը կազմել է 58,000 հազար դրամ և ձեռքբերման պահին ունեցել է 50 տարվա օգտակար ծառայության ժամկետ: «Դոբմին» ընկերության ղեկավարությունը որոշել է կիրառել ներդրումային գույքի իրական արժեքի մոդելը և տեղեկացվել է, որ գույքի իրական արժեքը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 65,000 հազար դրամ: Բացի գույքը ինքնարժեքով ճանաչելուց, հաշվապահական հաշվառման մեջ որևէ այլ գրառում չի կատարվել:

6. 2025 թվականի վերջին գուդվիլի արժեզրկման ստուգման արդյունքում բացահայտվել է, որ «Կրոֆին» ընկերության գուդվիլը արժեզրկվել է 16,000 հազար դրամով: «Հենսին»-ի գուդվիլը չի արժեզրկվել:
7. 2025 թվականի նոյեմբերին «Կրոֆին»-ն ապրանքներ է վաճառել «Դոբմին»-ին 24,000 հազար դրամով՝ ինքնարժեքի 20% հավելագնով (mark-up): Այս ապրանքների կեսը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ դեռևս պահվում էր «Դոբմին»-ի մոտ, իսկ վաճառքի գումարը ամբողջությամբ ենթակա է վճարման:
8. 2025 թվականի նոյեմբերին «Հենսին»-ը ապրանքներ է վաճառել «Դոբմին»-ին՝ 15,000 հազար դրամով: «Հենսին»-ի համախառն շահույթի մարժան կազմում է 30%: Այս ապրանքների 2/3-րդ մասը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ դեռևս պահվում էր «Դոբմին»-ի մոտ, իսկ վաճառքի գումարի 50%-ը դեռևս ենթակա էր վճարման:
9. «Դոբմին» ընկերությունը չափում է գուդվիլը և չվերահսկող բաժնեմասը՝ «Կրոֆին» ընկերության համար օգտագործելով իրական արժեքի մեթոդը, իսկ «Հենսին» ընկերության համար՝ համամասնական մեթոդը: «Կրոֆին» ընկերության չվերահսկող բաժնեմասի իրական արժեքը ձեռքբերման օրվա դրությամբ կազմել է 45,000 հազար դրամ, իսկ «Հենսին» ընկերությանը՝ 55,000 հազար դրամ:
10. «Դոբմին» ընկերության եկամուտներն ու ծախսերը տարվա ընթացքում հավասարաչափ են բաշխվել:
11. Հետաձգված հարկերը, ինչպես նաև ակնկալվող պարտքային կորուստը անտեսվում են:

Պահանջվում է.

Պատրաստել «Դոբմին» խմբի ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ: **(20 միավոր)**

Խնդիր 3 - Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Ստորև ներկայացված է «Էյչ ընդ Սի» ՓԲԸ (այսուհետև՝ Ընկերության) փորձնական հաշվեկշիռը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազ դրամ	Դեբետ	Կրեդիտ
Շենքեր առ 01.01.2025	26,440	-
Արտադրական գույք առ 01.01.2025	20,000	-
Բաժնետիրական կապիտալ (յուրաքանչյուրը՝ 1 դրամ անվանական արժեքով) առ 01.01.2025	-	36,000
Էմիսիոն եկամուտ առ 01.01.2025	-	5,400
Վերագնահատման պահուստ առ 01.01.2025	-	1,440
Կուտակված շահույթ առ 01.01.2025	-	11,286
Շահույթ նախքան ճշգրտումներն առ 31.12.2025	-	15,120
Փոխարկելի պարտատոմսեր	-	14,400
Վճարված շահաբաժիններ	6,516	-
Պայմանագրերի գծով հաճախորդից ստացված դրամական միջոցներ	-	3,900
Պայմանագրի կատարման հետ կապված մինչ օրս կատարված ծախսեր	4,800	-
Պաշարներ	7,758	-
Դեբիտորական պարտավորություններ	9,918	-
Դրամական միջոցներ	18,576	-
Ընթացիկ պահուստներ	-	2,160
Շահութահարկի գծով պարտավորություն	-	810
Ընթացիկ պարտավորություններ	-	3,492
	94,008	94,008

Միաժամանակ հայտնի է նաև հետևյալ տեղեկատվությունը.

1. Ընկերության փորձնական հաշվեկշիռում արտացոլված է 2025 թվականի հունվարի 1-ին Ընկերության կողմից թողարկված 144,000 դրամ արժողությամբ 100 հատ 4% տարեկան տոկոսադրույքով փոխարկելի պարտատոմսերը: Պարտատոմսերը կարող են փոխարկվել բաժնետոմսերի 2027 թվականի դեկտեմբերի 31-ին կամ մարվել նույն օրը՝ անվանական արժեքով: Փոխարկման իրավունք չունեցող համարժեք պարտատոմսերի տոկոսադրույք կազմում է 6%: Տոկոսները վճարվում են տարեկան՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ին: Յուրաքանչյուր տարվա վերջում ստացվելիք 1 դրամի ներկա արժեքը՝ 4% և 6% զեղչի տոկոսադրույքների պարագայում կազմում է՝

	4%	6%
Առ 31.12.2025	0.962	0.943
Առ 31.12.2026	0.925	0.890
Առ 31.12.2027	0.889	0.840

2. Տարվա ընթացքում Ընկերությունը պայմանագիր է կնքել հաճախորդի հետ՝ վերջինիս համար շինություն կառուցելու նպատակով՝ ժամանակի ընթացքում կատարելով կատարման պարտականությունը: Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է 26 միլիոն դրամ: Վերոնշյալ փորձնական հաշվեկշռում ներառված են մինչ օրս կատարված 4,8 միլիոն դրամ ծախսերը: Պայմանագրի ավարտման ծախսերը գնահատվում են ևս 5,2 միլիոն դրամ: 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ պայմանագիրը գնահատվում է 48% ավարտված: Մինչ օրս Ընկերությունը հաճախորդից ստացել է 3,9 մլն դրամ, ինչն արտացոլված է փորձնական հաշվեկշռում:
3. Ընկերությունը 2025 թվականի դեկտեմբերի 31-ին իրականացրել է 1-ը 5-ի դիմաց բոնուսային թողարկում (bonus issue), որը դեռևս չի գրանցվել վերոնշյալ փորձնական հաշվեկշռում: Ընկերությունը մտադիր է որպես հիմնական աղբյուր օգտագործել բաժնետոմսերի հավելագինը՝ բոնուսային թողարկումն իրականացնելիս:
4. Ընկերությունը արտադրական գույքի վերագնահատումից նախկինում ունեցել էր օգուտ, ինչը արտացոլված է վերագնահատման պահուստի մնացորդում՝ 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ: Տվյալ ամսաթվի դրությամբ՝ արտադրական գույքի մնացորդային օգտակար ծառայության ժամկետը կազմում է 25 տարի: 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ արտադրական գույքի արժեքը գնահատվել է 16 միլիոն դրամ: Դեռևս որևէ ձևակերպում չի կատարվել ընթացիկ տարվա մաշվածության ծախսի կամ վերագնահատման համար: Ընկերությունը տարեկան վերագնահատման պահուստից փոխանցում ևս չի կատարել:
5. Պարզվել է, որ ներկայացված փորձնական հաշվեկշռում չի ձևակերպվել նաև գույքագրման արդյունքում հայտաբերված պաշարների ավելցուկը՝ 620 հազար դրամ ընդհանուր արժողությամբ:
6. 2025 թվականի հունվարի 1-ին Ընկերությունը տեղեկացվել է, որ նախկին աշխատակիցը դատական գործընթաց է սկսել իրենց դեմ՝ անարդարացի ազատման համար: Իրավաբանական խորհրդատվության համաձայն՝ Ընկերության կողմից գործը պարտվելու և 2026 թվականի հունվարի 1-ին մոտ 1,5 միլիոն դրամ վճարելու հավանականությունը 80% էր: Այս խորհրդատվության հիման վրա Ընկերությունը 2025 թվականի հունվարի 1-ին գրանցել է 1,200 հազար դրամի պահուստ և որևէ հետագա ճշգրտում չի կատարել: Պահուստը գրանցվել է գործառնական ծախսերի մեջ: Ընկերության կապիտալի արժեքը տարեկան կազմում է 10%, իսկ մեկ տարվա համար 10% զեղչի գործակիցը կազմում է 0.9091:

7. Ընկերությունը սկսել է անշարժ գույքի կառուցման աշխատանքները 2025 թվականի հունվարի 1-ին, որն ավարտվել է 2025 թվականի սեպտեմբերի 30-ին: Կապիտալացվել է 9,500 հազար դրամի հիմնական միջոց, որից 7,800 հազար դրամը կազմում է 78 միլիոն դրամ մայր գումարով 10% տոկոսադրույքով վարկի՝ 12 ամսվա տոկոսագումարը, որը հատուկ վերցված է այս շինարարության իրականացման նպատակով: Ավարտից հետո անշարժ գույքն ունի 20 տարվա օգտակար ծառայության ժամկետ:
Ընկերությունը նաև գրանցել է 119 հազար դրամի գործառնական ծախսեր, որոնք ներկայացնում են ակտիվի մաշվածությունը 2025 թվականի սեպտեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար:
8. Պարզվել է, որ Ընկերության նախկին ֆինանսական վերահսկիչը կանխամտածված կերպով խեղաթյուրել է նախորդ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները: Ուստի հաշվեկշռում ներկայացված առևտրային դեբիտորական պարտքերից 1,600 հազար դրամը ենթակա է դուրս գրման, որից 400 հազար դրամը վերաբերում է 2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվան, իսկ 1,200 հազար դրամը՝ նախորդ ժամանակաշրջանին:
9. Ընկերությունը 2025 թվականի հուլիսի 1-ին, որը նաև հանդիսանում էր մատակարարման ամսաթիվը, ապրանքների խոշոր վաճառք է իրականացրել: Պայմանագրի պայմանների համաձայն՝ Ընկերությունը 2026 թվականի հունիսի 30-ին կստանա 5,000 հազարի դրամի վճարում: Ներկայումս Ընկերությունը գործարքի գծով ճանաչել է 2,400 հազար դրամի հասույթ և առևտրային դեբիտորական պարտքեր: Ղեկավարությունը մտադիր է մնացած գումարը ձևակերպել 2026 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարում: 2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններում վաճառքի գծով կատարված ծախսերը ճշգրիտ ձևակերպվել են: Ընկերության կապիտալի արժեքը կազմում է 8%, որի դեպքում համապատասխան գեղջի գործակիցը կկազմի 0.9259:
10. Ընկերությունը նաև ապրանքներ է վաճառել արտասահմանյան գնորդի 2025 թվականի դեկտեմբերի 1-ին՝ 1,000 հազար ԱՄՆ դոլար արժեքով: Նրանք համաձայնության են եկել 60-օրյա վճարման ժամկետի շուրջ: Այս վաճառքի գծով Ընկերությունը հասույթ դեռևս չի ճանաչել. ձևակերպել է միայն վաճառքի ինքնարժեքը: Գործարքի գումարը մնում է վճարման ենթակա 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Համապատասխան փոխարժեքներն են՝

Ամսաթիվ	1 ՀՀ դրամին համարժեք ԱՄՆ դոլար
2025 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ	0,5
2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ	0,8

Պահանջվում է՝

- Պատրաստել «Էյչ ընդ Սի» ՓԲԸ-ի սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը 2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար: **(5 միավոր)**
- Պատրաստել «Էյչ ընդ Սի» ՓԲԸ-ի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ: **(15 միավոր)**

Խնդիր 4 - Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության պատրաստում անուղակի մեթոդով

Ստորև ներկայացվում է «Արմմաս» Ընկերության Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝

Հազ դրամ	31.12.2025թ.	31.12.2024թ.
Ակտիվներ		
Հիմնական միջոցներ	20,000	29,811
Ներդրումային գույք	4,717	4,717
Ոչ նյութական ակտիվներ	7,642	6,604
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	32,359	41,132
Պաշարներ	13,208	12,925
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	5,887	4,906
Ապահովագրության գծով փոխհատուցում	2,830	2,264
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,613	-
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	23,538	20,095
Ընդամենը ակտիվներ	55,897	61,227
Սեփական կապիտալ		
Բաժնետիրական կապիտալ	28,302	22,642
Բաժնետոմսերի հավելագին վերագնահատման պահուստ	3,774	9,434
Կուտակված շահույթ	2,400	3,019
Կուտակված շահույթ	2,458	1,604
Ընդամենը սեփական կապիտալ	36,934	36,699
Պարտավորություններ		
Վարձակալության գծով պարտավորություն	3,774	3,208
Ստացված վարկեր 6%	1,509	-
Ստացված վարկեր 10%	-	7,547
Պետական շնորհների գծով պարտավորություն	2,642	1,698
Հետաձգված հարկային պարտավորություններ	377	943
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	8,302	13,396
Բանկային օվերդրաֆտ	-	1,038
Վարձակալության գծով պարտավորություն	1,698	1,509
Պետական շնորհների գծով պարտավորություն	1,132	755
Շահութահարկի գծով պարտավորություն	189	2,264
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	7,642	5,566
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	10,661	11,132
Ընդամենը պարտավորություններ	18,963	24,528
Ընդամենը սեփական	55,897	61,227

«Արմմաս» Ընկերության 31 դեկտեմբերի 2025թ. ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունից քաղվածք

Հազ դրամ	2025թ.
Գործառնական գործունեության արդյունքներ	(1,890)
Տոկոսային ծախսեր	(491)
Տոկոսային եկամուտ	75
Փոխարժեքային տարբերություններից օգուտ	47
Շահույթ (վնաս) նախքան շահութահարկով հարկումը	(2,259)
Շահութահարկի գծով փոխհատուցում (ծախս)	94
Տարվա զուտ շահույթը (վնաս)	(2,165)

«Արմմաս» Ընկերության հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաբերյալ տեղեկատվություն

Հիմնական միջոցներ (Հազ դրամ)	Սկզբնական արժեք	Կուտակված մաշվածություն	Հաշվեկշռային արժեք
Առ 31.12.2025	36,000	16,000	20,000
Առ 31.12.2024	35,711	5,900	29,811
Ոչ նյութական ակտիվներ (Հազ դրամ)			
Առ 31.12.2025	9,077	1,435	7,642
Առ 31.12.2024	7,804	1,200	6,604

Առկա է նաև հետևյալ տեղեկատվությունը.

- Տարվա ընթացքում «Արմմաս» ՓԲԸ-ն (այսուհետև՝ Ընկերություն) վաճառել է իր գործարանի իրական արժեքով՝ 12 մլն դրամով: Վաճառքի ամսաթվի դրությամբ գործարանի հաշվեկշռային արժեքը կազմել է 7,4 մլն դրամ, որը հաշվարկվել է նախկինում վերագնահատված արժեքից (8,6 մլն դրամ) նվազեցնելով վերագնահատումից հետո հաշվարկված կուտակված մաշվածությունը՝ 1,2 մլն դրամի չափով: Գործարանի վաճառքից ստացված շահույթը ներառված է գործառնական շահույթում: Վերագնահատման պահուստի մնացորդ առ 31.12.2024թ. ամբողջությամբ վերաբերում է գործարանին: Տարվա ընթացքում ոչ ընթացիկ այլ ակտիվների վաճառք չի իրականացվել: Տարվա ընթացքում վարձակալությամբ ձեռք բերված սարքավորումների գծով ճանաչվել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ՝ 1,5 մլն դրամ արժեքով: Ընկերության կողմից ձեռքբերված հիմնական միջոցների մի մասը՝ 1,5 մլն արժեքով սարքավորումները, ձեռք են բերվել կառավարության սուբսիդավորման ծրագրի շրջանակներում՝ բավարարելով սուբսիդավորման ծրագրի անհրաժեշտ պայմանները:
- Ապահովագրական պահանջը վերաբերում է 2025 թվականի սեպտեմբերին տեղի ունեցած ջրհեղեղի հետևանքով ընկերության պաշարներին հասցված վնասին: Սկզբնական գնահատականը տարվա ընթացքում վերանայվել է ապահովագրական ընկերության հետ բանակցությունների արդյունքում: Ակնկալվում է, որ ապահովագրական պահանջը կկատարվի մոտ ապագայում:

3. 31.12.2025թ դրությամբ հիմնական միջոցների ձեռքբերման գծով կրեդիտորական պարտքերի մնացորդը կազմում է 0,8 միլիոն դրամ: 31.12.2024թ դրությամբ հիմնական միջոցների ձեռքբերման գծով կրեդիտորական պարտքերի մնացորդը կազմում է 0,2 միլիոն դրամ:
4. Ոչ նյութական ակտիվների բոլոր դասերը չափվում են «Վերագնահատման մոդելով»: Կազմակերպությունը առաջին անգամ վերագնահատել է իր ոչ նյութական ակտիվները 31.12.2025թ. դրությամբ, ինչի արդյունքում ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը աճել է 2,4 մլն դրամով:
5. Տարվա ընթացքում առկա 3,6 մլն դրամ հաշվեկշռային արժեք ունեցող անորոշ ժամկետով ոչ նյութական ակտիվներ այլևս չեն օգտագործվելու կազմակերպության կողմից և դրա օգտագործումից կամ հետագա օտարումից այլևս չեն ակնկալվում ապագա տնտեսական օգուտներ: Այդ պատճառով 2025թ. տվյալ ակտիվներն ապաճանաչվել են:
6. 01.10.2025թ.-ին կազմակերպությունը ձեռք է բերել նոր ներդրումային գույք՝ 1,4 մլն արժեքով: Նույն ամսաթվից մեկ այլ ներդրումային գույք՝ 1,7 մլն արժեքի, այսուհետև օգտագործվելու է սեփականատերերի կողմից որպես գործարանի տարածք: Կազմակերպության ներդրումային գույքը հաշվառվում է իրական արժեքով:
7. 2025թ. ընթացքում առաջացած արտարժույթի փոխարժեքային տարբերությունների օգուտից 5 հազ դրամը առաջացել է արտարժույթով արտահայտված դրամական միջոցների գծով, իսկ մնացած մասը արտարժույթով արտահայտված դեբիտորական պարտքերի գծով:
8. 01.02.2025թ. կազմակերպությունը իրականացրել է սովորական բաժնետոմսերի թողարկում՝ չորսը-մեկ հարաբերակցությամբ: Թողարկումը կատարվել է բաժնետոմսերի հավելագին հոդվածի հաշվին:
9. Ընկերությունը տոկոսային ծախսերը և շահաբաժինների գծով վճարումները ներկայացնում է գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքերի կազմում: Բանկային օվերդրաֆտներ կազմում են կազմակերպության դրամական միջոցների կառավարման բաղկացուցիչ մասը: Գործարքներից առաջացող հնարավոր հետաձգված հարկի գումարները, ինչպես նաև օվերդրաֆտի գծով հնարավոր տոկոսները խնդրում անտեսված են:

Պահանջվում է՝

Պատրաստել «Արմմաս» ընկերության դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը 31.12.2025թ. դրությամբ՝ անուղղակի մեթոդով: **(20 միավոր)**

Խնդիր 5 -Ֆինանսական հաշվետվությունների վերլուծություն

«Ֆինարա» ՍՊԸ-ն հազուստ արտադրող ընկերություն է, որը հիմնական եկամուտը ստանում է մեծածախ վաճառքից:

Ստորև ներկայացված են «Ֆինարա» ՍՊԸ-ի 2025թ. ֆինանսական հաշվետվությունները.

«Ֆինարա» ՍՊԸ-ի ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 31 դեկտեմբերի 2025թ -ի դրությամբ

Հազ դրամ	31/12/2025
Հիմնական միջոցներ	140,800
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող (ԻԱՇՎ)	
ֆինանսական ակտիվներ	19,200
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	160,000
Պաշարներ	17,600
Դեբիտորական պարտքեր	17,600
Հարկային ակտիվ	4,800
Դրամական միջոցներ	9,600
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	49,600
Ընդամենը ակտիվներ	209,600
Կապիտալ և պարտավորություններ	
Բաժնետիրական կապիտալ (1000 դրամ յուրաքանչյուրը)	104,000
Էմիսիոն եկամուտ	8,000
Կուտակված շահույթ	28,800
Ընդամենը կապիտալ	140,800
Ստացված փոխառություններ	32,000
Հետաձգված հարկային պարտավորություններ	9,600
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	41,600
Կրեդիտորական պարտքեր	27,200
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	27,200
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ	209,600

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 31 դեկտեմբերի 2025թ- ին ավարտված տարվա համար

Հազ դրամ	2,025	2024
Հասույթ	200,000	250,000
Վաճառքի ինքնարժեք	(175,000)	(190,000)
Համախառն շահույթ	25,000	60,000
Գործառնական ծախսեր	(29,000)	(30,000)
Գործառնական շահույթ	(4,000)	30,000

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող (ԻԱՇՎ) ֆինանսական ակտիվների վերագնահատմից կորուստ	(8,400)	-
Շահույթը (վնաս) մինչև տոկոսային ծախսը և հարկերը	(12,400)	30,000
Տոկոսային ծախսեր	(4,800)	(3,600)
Շահույթը (վնաս) մինչև հարկերը	(17,200)	26,400
Հարկի գծով ծախս (փոխհատուցում)	5,000	(1,200)
Տարվա շահույթը (վնաս)	(12,200)	25,200
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		
Վերագնահատման պահուստ	(36,000)	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար	(48,200)	25,200

«Ֆինարա» ՍՊԸ-ի ղեկավարությունը հայտարարել է, որ ընկերության գործունեության վրա զգալիորեն ազդել է ընդհանուր տնտեսական անկումը, սակայն, նրանց գնահատմամբ, «Ֆինարա» ՍՊԸ-ն ցուցաբերել է կայունություն՝ չնայած ստորև ներկայացված ծախսերին:

«Ֆինարա» ՍՊԸ-ի գործարանի շենքը 2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում արժեզրկվել է մոտ 50 մլն դրամի չափով: Վնասի այն մասը, որը գերազանցել է նախորդ տարիներից գոյացած վերագնահատման պահուստը, հանգեցրել է 14 մլն դրամի ծախսի, ինչը ճանաչվել է վաճառքի ինքնարժեքում: Տարվա ընթացքում հիմնական միջոցների ձեռքբերում կամ օտարում չի իրականացվել:

Ծախսերի կրճատման ռազմավարության շրջանակում «Ֆինարա» ՍՊԸ-ն 2025 թվականին իրականացրել է ավագ և որակավորված աշխատակիցների կրճատում, որի հետ կապված ծախսերը կազմել են 3 մլն և ներառվել են գործառնական ծախսերի կազմում: Նույն ռազմավարության շրջանակում ընկերությունը նաև կրճատել է մարքեթինգային և գովազդային ծախսերը, որոնք նույնպես ներակայացված են գործառնական ծախսերում:

«Ֆինարա» ՍՊԸ-ի բանկային մնացորդը նախորդ տարվա համեմատությամբ աճել է մոտ 6 մլն դրամով, մինչդեռ բանկային փոխառությունները նվազել են 5 մլն-ով՝ համեմատած 2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ցուցանիշների հետ:

Դրամական հոսքերը բարելավելու նպատակով «Ֆինարա» ՍՊԸ-ն տարվա ընթացքում իրականացրել է բաժնետոմսերի թողարկում, որոնք ամբողջությամբ տեղաբաշխվել են: Նախորդ տարվա համեմատ մեկ բաժնետոմսի հաշվով վճարվող շահաբաժինը կրճատվել է 50%-ով:

Վերը նշված բոլոր գործարքներն արտացոլված են Ընկերության հաշվետվություններում:

Ստորև ներկայացված է «Ֆինարա» ՍՊԸ-ի սեփական կապիտալի քաղվածքը 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	Առ 31.12.2024՝ հազար ՀՀ դրամով
Բաժնետիրական կապիտալ (1000 դրամ յուրաքանչյուրը)	96,000
Էմիսիոն եկամուտ	-
Վերագնահատման պահուստ	36,000
Կուտակված շահույթ	48,000
Ընդամենը սեփական կապիտալ	180,000

Հետևյալ գործակիցները հաշվարկվել են «Ֆինարա» ՍՊԸ-ի համար՝ 2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ցուցանիշներով.

	2024
Համախառն շահույթի մարժա	24%
Գործառնական շահույթի մարժա	12%
Սեփական կապիտալի եկամտաբերություն (ROE)	14%
Զուտ ակտիվների շրջանառության գործակից	1.39
Ֆինանսական լծակի գործակից (gearing) (ՈԸՊ/ՍԿ)	21%
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողություն	29
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողություն	24
Պաշարների շրջապտույտի տևողություն	24

Պահանջվում է՝

- Հաշվարկել ներկայացված ֆինանսական գործակիցները «Ֆինարա» ՍՊԸ-ի 2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններում ներկայացված ցուցանիշների հիման վրա: **(4 միավոր)**
- Վերլուծել «Ֆինարա» ՍՊԸ-ի 2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական վիճակի և համապարփակ ֆինանսական արդյունքի վրա ազդեցություն ունեցող հիմնական գործոնները և մեկնաբանել տնտեսական միջավայրի վատթարացման ազդեցությունն Ընկերության ֆինանսական ցուցանիշների վրա: **(16 միավոր)**